



ԼՐԱՏՈՒ  
OIA  
ՓԵՏՐՈՒԱՐ

ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ  
NEWSLETTER  
FEBRUARY

2  
0  
2  
3



19726 SHERMAN WAY, WINNETKA, CA 91306 ☎ (818) 342- 0110 E-mail [bolsahye1976@gmail.com](mailto:bolsahye1976@gmail.com) Website:

ԱՆՑԱՃ ԶԵՆԱՐԿՆԵՐ PAST EVENTS

**ՏՈՔԹ. ԱՐԹՕ ԷՐՍԱՆ ԽԱԶԵՐԵԱՆԻ ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ ԵՒ ՄԻԶԻՆՔԻ ՃԱՇ ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԷՋ**

*Գրի առաւ՝ Մարիէթ Օհանէս*



Երեքշաբթի, Փետրուար 28, 2023ին, կազմակերպութեամբ Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբին, տեղի ունեցաւ Պոլսահայ Միութեան նախկին ատենապետ եւ քառասնամեայ նուիրեալ ծառայող՝ Տոքթ. Արթօ Էրսան Խաչերեանի մեծարանքի երեկոն, ընտանեկան գիշերուան մը հիւրասիրութեամբ, տօնակատարելով նաեւ «Կանանց Միջազգային Տօնը»:

Երեկոն սկսաւ Միութեան Հոգաբարձու եւ մշակութային Յանձնախումբի ատենապետ՝ Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեանի բարի գալուստի խօսքով:

Ներկաները ճաշակեցին Միջինքի համեղ ճաշերը միաժամանակ զրուցելով իրար հետ:

Շուրջ 74 հոգիներու ներկայութեամբ մտերմիկ գիշերը ճոխացաւ, զուարճալի պատմութիւններով եւ զանազան խաղերով հանդիսավարութեամբ Միութեան քարտուղարուհի՝ Մարիէթ Օհանէսի:

Տոքթ. Աւետիքեան ընթերցեց օրուան մեծարեալ Տոքթ. Արթօ Էրսան Խաչերեանի կենսագրականը դրուատելով անոր տարած զոհողութիւններն ու ՔԱՌԱՍՆԱՄԵԱՅ անձնուէր աշխատանքները Միութեան հանդէպ: Ապա Տոքթ. Աւետիքեան մեծարեալին շնորհեց չորս ադամանդեայ քարերով եւ կարմիր Սուտակ քարով մը զարդասեղը, ապա հրաւիրուեցաւ Միութեան Գործադիր Յանձնախումբի ատենապետ՝ Տոքթ. Սուրատ Քէօշքեր որ գովաբանելով մեծարեալը շնորհեց անոր Միութեան կողմէ ստորագրուած Գնահատագիրը: Խօսք առաւ օրուան մեծարեալը որ շնորհակալութիւն յայտնեց իրեն ընծայուած սոյն պատուին համար եւ նշեց Միութենէն անդարձ բաժնուած հիմնադիր անդամները՝ Օննիկ Պալեան, Պերճ Մխճեան եւ Երուանդ Պալճը, նաեւ շեշտեց թէ երիտասարդները պետք է Միութիւն գան եւ մաս կազմեն գործունէութիւններուն: Իր խօսքէն ետք ան հատեց յատուկ կարկանդակը: Ապա տեղի ունեցաւ յիշատակի պատկերահանում եւ ներկաները վերադարձան իրենց սեղանները շարունակելու համար հաճելի գիշերը:

Տօնակատարուեցաւ նաեւ «Կանանց միջազգային տօնը» եւ ընտրուեցաւ օրուան բախտաւոր տիկինը որ ստացաւ իր նուէրը: Տեղի ունեցաւ նաեւ հարց պատասխանի խաղեր եւ բախտաւորներ ստացան նուէրներ:

Իսկապէ՛ս որ յաջող գիշեր մըն էր, որ պիտի չկայանար առանց Միութեան անդամներուն եւ համակիրներուն թափած ջանքերուն: Լիայոյս ենք, որ ձեզ կը հանդիպինք մեր յաջորդ ընտանեկան ձեռնարկին՝ ՄԱՐՏ 21: Շնորհակալութիւն բոլոր ներկաներուն:





## **ՏՈՔԹ. ԱՐԹՕ ԷՐՍԱՆ ԽԱՉԵՐԵԱՆԻ ՀԱԿԻՐՃ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆԸ**

Ծնած է Պոլիս 1937ին Տէր եւ Տիկին Գրիգոր եւ Աղանի Էրսան ամուլէն: Յաճախած է Էսսեան Վարժարան (նախակրթարան եւ միջնակարգ) ուրկէ շրջանաւարտ եղած է 1953ին, ապա բարձրագոյն (Լիսէ)ի ուսումը ստացած է Կեդրոնական Վարժարանի մէջ եւ շրջանաւարտ եղած է 1956ին: 1962ին շրջանաւարտ եղած է Պոլսոյ համալսարանի Ատամնաբուժական բաժնէն: Զինուորական պարտականութիւնը կատարելէ ետք կը մեկնի Զուլիցերիա, եւ Լոզանի համալսարանէն կը ստանայ ատամնաբուժական վկայագիր ուր կը մնայ եւ կը գործէ հինգ տարի իբրեւ ատամնաբոյժ: 1969ին կը վերադառնայ Պոլիս ուր կը բանայ իր անձնական դարմանատունը:

Այդ միջոցին կ'ընտրուի Պէյօղլուի Աղքատախնամի հոգաբարձու եւ ատամնաբոյժ: Նոյն շրջանին կը ստանձնէ Կեդրոնական Սանուց Սիութեան վարչութեան ատենադպրութեան եւ Բ. Ատենապետի զոյգ պաշտօնները:

Յետագային կը դառնայ Ղալաթիոյ եկեղեցւոյ եւ Կեդրոնական վարժարանի խնամակալ ուր կը գործէ մինչեւ Սիացեալ Նահանգներ հաստատուիլը:

1977ին ծնողքին հետ կը գաղթէ Լոս Անճէլըս, ուր ատամնաբուժական քննութիւններու պատրաստութեան շրջանին թէ՛ Պոլսահայ Սիութեան եւ թէ՛ Խաչատուրեան Դպրաց Դաս երգչախումբի անդամակցելով կը ստանձնէ Վարչական պաշտօններ: 1981ին կը բանայ իր դարմանատունը: 1977էն սկսեալ աշխատակցելով Պոլսահայ Սիութեան 26 տարիներ յարատեւօրէն կը ստանձնէ տարբեր շրջաններու 10 տարի ատենապետութեան, 2 տարի Բ. ատենապետութեան եւ 5 տարի վարչութեան անդամի պաշտօնները:

Նոյնպէս, կը ստանձնէ Կեդրոնական Սանուց Յանձնախումբի, Մշակութային Յանձնախումբի ատենապետութեան պաշտօնները: Եղած է նաեւ Պոլսահայ Սիութեան »ՁԱՅՆ« պարբերաբերթի հիմնադիրներէն: Ստանձնած է նաեւ Պոլսահայ Սիութեան Հիմնադրամի ֆոնտի վարչութեան Ատենապետի պաշտօնը:




Եղած է Խաչատուրեան Դպրաց Դաս Երգչախումբի հիմնադիր անդամներէն, եւ **45** տարիէ ի վեր կը շարունակէ անդամակցիլ: Վարած է 2 շրջանի ատենապետութեան պաշտօն, եղած է Ս. Սարգիս եկեղեցւոյ պատգամաւոր, անդամակցած է Առաջնորդարանի կազմած Կաթողիկոսական Կարգադիր Յանձնախումբերուն եւ Սիացեալ երգչախումբերուն:

Արժանացած է Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի ձեռամբ շնորհուած՝ Ս. Ներսէս Շնորհալիի շքանշանին:



**ՀՈԳԵՅԱՆԳԻՍ, ՄՈՄԱՎԱՌՈՒԹԻՒՆ ԵՒ ՈԳԵԿՈՉՈՒՄ  
ՈՂԲԱՑԵԱԼ ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ**

*Գրի առաւ՛ Մարիէթ Օհաննէս  
(Պոլսահայ Միուրթեան քարտուղարուհի)*



Կիրակի, Փետրուար 5, 2023ին Պոլսահայ Միութիւնը «Գրիգոր եւ Աւետ Քիւրքչիւօղլու» սրահին մէջ կազմակերպած էր յուշ երեկոյ մը, հանգուցեալ Զրանդ Տիկի նահատակութեան 16րդ տարելիցին առթիւ:

Երեկոն սկսաւ տուտուկահար Ալպերթ Վարդանեանի քաղցրահնչիւն մեղեդիներով:

Բացման խօսքը կատարեց Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբի ատենապետ եւ Զոգաբարձու՝ Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեան, որ ներկաները ողջունելէ ետք շնորհակալութիւն յայտնեց Միութեան բոլոր անդամներուն թէ՛ բարոյական եւ թէ՛ նիւթական իրենց աջակցութեան համար: Ան նշեց թէ այդ օր բոլորը մեկտեղուած են յիշելու նահատակութեան 16րդ տարելիցը, Ակօս շաբաթաթերթի խմբագրապետ եւ մեր հերոս՝ Զրանդ Տիկի եւ շնորհելու աւանդութիւն դարձած Զրանդ Տիկի Ազատութեան եւ Արդարութեան շքանշանը Տեղասպանութեան Ընդդիմադիրներու Միութեան նախագահ՝ յետ մահու՝ թուրք մտաւորական եւ մարդասէր՝ Ալի Էրթէմի: Ապա հրաւիրեց բոլորը յոտնկայս եւ վայրկեան մը յարգանքի տուրք մատուցանելու հանգուցեալ Տիկի եւ վերջերս մեզմէ անդարձ բաժնուած Պոլսահայ Միութեան նախագահ՝ Իրաւաբան Էտվին Միւնասեանի հոգիներուն յիշատակին: Որմէ ետք հրաւիրեց Զոգեւորականաց դասը՝ հոգեհանգստեան պաշտօն կատարելու: Կատարուեցաւ մոմավառութիւն եւ երգուեցաւ Տերունական աղօթքը եւ հրուշակի օրհնութիւնը:

Ձեռնարկի հանդիսավարուիին կրթական Մշակ եւ Զայերէն լեզուի եւ հոգեբանութեան ուսուցչուի՝ Ռոզալին Մատտեանն էր, որ ձեռնհասօրէն վարեց երեկոն:

Հանդիսավարուիին հրաւիրեց Ակօս շաբաթաթերթի գլխաւոր խմբագիր եւ բաժնետէր ARTI TV Կամուրջ յայտագիրը պատրաստող՝ Արիս Նալճըն (Չումի վրայ) որ շնորհակալութիւն յայտնեց զինք հրաւիրած ըլլալուն համար, ապա խօսեցաւ հետաքրքրական թեմայի մասին ունենալով 2 ակադեմիկոսներ: Խօսքը Յունուար 19-ի Սերունդի մասին էր, թէ ինչպէս այս 2 երիտասարդները անցուցած են այս հետազօտութիւնը և յայտնած. Նալճըն ներկայացուց ճիհան Էրտալը Գարլթօն համալսարանէն և Էօստերճան Մուֆին՝ ընկերաբան՝ Գերմանիոյ Համալսարանէն:

Ճիհան Էրտալ նշեց թէ, 20/10-ականներու սկիզբը և 20/11-ին և անցեալ տարի, իրենք հնարաւորութիւն ունեցած են հերթական հետազօտութիւն անցնել յիշողութեան աջակցութեամբ՝ Զրանդ Տիկի հիմնադրամի կողմէ տրամադրուած հետազօտական խիզախութեան և փորձած են հասկնալ Յունուարի հետքը: 19-րդ սերունդը իր վերջին հետազօտութեան հիմնական նպատակին կը վերաբերէ՝ շատ անելի լաւ ձեռով հասկնալու և իմաստաւորելու երիտասարդ հայերու, ինչպէս նաև երիտասարդ թուրք և քիւրտ ժողովուրդի քաղաքական եւ պատշաճ ակնկալիքները, և թէ ինչպէս իրենց վրայ ազդած են 2007-2015 թուականներուն. իրենց հետազօտութիւնները նաև ծանրաբեռնած են իրենց մանրամասնել, թէ ինչպէս երիտասարդ հայերը ազդուած են 20/20-ի Ղարաբաղեան պատերազմէն: Ճիհան Էրտալը նշեց թէ, կրնայ ըսել, որ իրենց կատարած հետազօտութիւնը թոյլ կու տայ ներկայացնել Յունուար 19-ի սերունդը միևնույն աշխարհ:

Իսկ Ընկերաբան Էօստերճան Մուֆի արտայայտուեցաւ ըսելով թէ՝ ի՞նչ կ'ըսէ իրենց այս հետազօտութիւնը ապագայի մասին: Աւելի պայծառ ապագային նայելու համար անոնք պետք է ետ նային անցեալին: Իրենց համար, որպէս իրենց հետազօտութեան հիմնական յայտնաբերողներու, անելի դիւրին է թրքերէնի և քրտերէնի լռութիւնը պետական պաշտօնեաներու և ընկերական լրատուամիջոցներու կողմէ օգտագործուող ցեղասպան և ցեղական լեզուի դէմ: Եւ պարզապէս գլուխը թեքելով, երբ քաղաքացիական կորուստներ կ'ըլլան: Ասիկա հիասթափութիւն է մէկ կողմէն: Հետազօտութեան միւս կողմն այն է, որ անձնապէս ինքը՝ Զրանդ Տիկի, դարձած է յիշատակի վայր կամ շատ կարևոր գործիչ, որ չի սահմանափակուիր որևէ տարիքային խումբով այս պահուն թուրքիոյ մէջ: Այսպիսով, անոր ժառանգութիւնն ու յիշատակը թուրքիոյ մէջ կը շարունակուին: Անոնք ականատես եղան ոչ թէ



Պոլսոյ տարբեր խումբերու համերաշխութեանը, այլ այդ համերաշխութեան յիշողութեանը և համերաշխութեան դրական մտածելակերպի ընդհանուր նպատակներուն կիսելուն, ինչ որ մենք պարզեցինք հետազօտութեան մէջ, որ թոյլ տուաւ մեզ անելի պայծառօրէն նայիլ ապագային:

Հանդիսավարուին բեմ հրաւիրեց Նոր Սերունդ Մշակութային Միութեան ատենապետ՝ Յարութ Տեր Դաւիթեանը որուն խօսքին սիւրբ էր՝ «Հրանդ Տինք՝ նորարար մտածողութեան մարդը»:

Տիար Տեր Դաւիթեան յայտնեց թէ «Մարդ անհատին ուղեղը եւ մտածելու կարողութիւնը հրաշալի երեւոյթ մըն է: Մարդ կայ, որ տուեալ կացութեան մը մէջ կ'անճրկի եւ կը յուսահատի: Մարդ ալ կայ, որ այդ նոյն կացութեան մէջ գտնուելով, հիանալի գաղափարներ կ'ունենայ եւ գլխիվայր շրջելով իրավիճակը, մեծ յաջողութիւններ կ'արձանագրէ: Ուրեմն, մարդուս մտածելու կարողութենէն կախեալ է, որ ի՞նչպիսի կեանք մը կ'ապրի եւ ի՞նչ անանդ կը թողու:

Միլիոնաւոր թուրքեր ամէն առաւօտ կը կրկնէին լոզունգ մը՝ «Ես թուրք եմ, շիտակ եմ, աշխատասեր եմ, պարտականութիւնս է փոքրերը պաշտպանել եւ մեծերը յարգել, հայրենիքս ու ազգս անձեռն անելի սիրել, ամենէն մեծ ցանկութիւնս է բարձրանալ եւ յառաջդիմել ու իմ գոյութիւնը թուրք գոյութեան նուէր թող ըլլայ:» Հրանդ Տինք զատուեցաւ անոնցմէ, բացազանչելով՝ «Ես թուրք չեմ, Թուրքիայէն եմ եւ հայ եմ»: Կրնա՞ք երեւակայել, որ ի՞նչ մեծ հետեւանքներ ու արձագանք կրնար ունենալ այս պարզ երեւացող, բայց շա՛տ խորունկ մտածելակերպը: 85 միլիոնոց Թուրքիոյ բնակչութեան առնուազն 25-30 միլիոնը թուրք չեն, եւ եթէ ասոնք Հրանդ Տինքի նման սկսէին մտածել եւ գործել, կրնա՞ք երեւակայել որ ինչե՞ր կրնային ըլլալ հետեւանքները: Հետաքրքրական է, որ երբ Էրտողան իշխանութեան տիրացաւ, վերջ դրաւ այս ամենօրեայ արարողութեան: Ահա այսպիսի մտածելակերպի մարդ էր Հրանդ Տինք: Դժբախտաբար իր նմանները հեշտութեամբ չեն հասկցուիր իրենց շրջապատին կողմէ եւ նոյնիսկ սխալ ալ կը հասկցուին: Ու ժամանակ պէտք է անցնի, որ այսպիսիներուն մեծութիւնը հասկնալի դառնայ ընդհանուր ժողովուրդին: Դժբախտաբար նաեւ, այս հասկացողութիւնը կը պատահի անոնց մահէն ետք միայն: Այս մտածելակերպի մարդիկ շատ լաւ կը գիտակցին այս իրականութեան, բայց չեն շեղիր իրենց ընթացքէն, Պարոյր Սեւակի նման յայտարարելով՝ «Յանուն վաղուան ճշմարտութեան, թող որ այսօր լինեմ սխալ»:

Հրանդ Տինք իր կենդանութեան դժբախտաբար չհասկցուեցաւ շատ մը հայերու կողմէ: Հեզնականը հոն է, որ ան շատ լաւ հասկցուեցաւ թուրք ղեկավարութեան կողմէ, որ զինքը մեծ վտանգ նկատելով, վերացուցին:

Մինչ շատ մը հայեր կ'աշխատէին մէկուսացնել Թուրքիան, ինք պատգամեց՝ փոխանակ աշխատելու ի նպաստ Թուրքիոյ մէկուսացման, մենք պէտք է աշխատինք, որ Թուրքիան Եւրոպական Միութիւն մտնէ: Եթէ այդ պատահի, Թուրքիոյ մէջի հայ ժողովուրդի թիւը կրնայ 2-3 միլիոնով անելնալ (թրքացած հայերու հայութեան վերադարձով):

Մինչ շատ մը հայեր համաձայն չէին Թուրքիոյ ժողովրդավարացման, ան պատգամեց՝ Թուրքիան այսօր ինքնութեան հարց ունի: Մենք պէտք է քաջալերենք այս հարցի ազատ քննարկումը ժողովրդային լայն խաւերու կողմէ, ժողովրդավար մթնոլորտի ստեղծումով: Թուրքիոյ ժողովրդավար դառնալը մեզի նպաստաւոր է:

Մինչ շատ մը հայեր կ'աշխատէին հայերու ցեղասպանութիւնը ուրացողները պատժամիջոցներու ենթարկելու, ան պատգամեց՝ ես դեմ եմ այդ գծով Ֆրանսայի խորհրդարանի որոշումին: Ուեւ մէկուն բերանը փակելով յառաջ չենք երթար, այլ՝ երկխօսութեամբ:

Ան նաեւ պատգամեց՝

-Եական գործը ժողովուրդներու միջեւ պիտի ըլլայ եւ ոչ թէ կառավարական կամ պետական մարմիններու: Հիմնական փոփոխութիւնները միշտ ալ վարեն վեր կ'ըլլան եւ ոչ թէ վերեն վար:

-Պատմութենէն դաս պետք է քաղել: Հայը պետք չէ իր դատը խաղաքարտ դարձնէ այս կամ այն պետութեան ձեռքին:

-Ցեղասպանութեան ճանաչում պետք չէ մուրալ, այլ՝ պահանջել: Եւրոպան քաջածանօթ է թէ հայերուն ի՞նչ պատահեցաւ համաշխարհային առաջին պատերազմի ընթացքին:

-Սփիւռքը չի՛ կրնար մէկ մարմին դառնալ: Պետք չէ դառնայ: Բայց կրնայ աշխատիլ մէկ նպատակի իրագործման համար՝ Հայաստանի Եւրոպական Միութեան անդամակցութեան համար: Ըստ ինձի, այս պետք է ըլլայ մեր առաջնահերթ գործը:

-Մինչեւ Հայաստանի անկախացումը, հայուն սիրտն ու զգացական մօտեցումները հայապահպանման նեցուկ հանդիսացան: Անկախացումէն ետք, պետական մտածողութիւնը պետք է փոխարինէ զգացական մօտեցումները:

Իր այս պատգամները մենք գրի առինք երբ իր Լոս Անճելըս այցելութեան առթիւ, Նոյեմբեր 4, 2006-ին, 5 հոգիով հանդիպում ունեցանք Նոր Սերունդ Մշակութային Միութեան գրասենեակին մէջ, լուսահոգի Էտվին Մինասեանի ներկայութեան: Մինչ այդ, ան հանդիպումներ ունեցած էր այլ կազմակերպութիւններու հետ: Աւելի քան մէկ ժամ տեւած այդ հանդիպման աւարտին, ան ըսաւ, որ միայն մեզի հետ հարց չէր ունեցած, որովհետեւ կրցած էինք զիրար լաւ հասկնալ: Այդ հանդիպման ընթացքին, երբ իրեն ըսի, որ պետք չէ՞ զգոյշ ըլլայ, որ իր արտայայտած գաղափարները, մանաւանդ այն մէկը, որ «Թուրքիան ինքնութեան հարց ունի եւ մենք պետք է քաջալերենք այս հարցի ազատ քննարկումը ժողովրդային լայն խաւերու կողմէ», վտանգաւոր հետեւանքներ կրնան ունենալ իր անձին համար, ան անդորդելի մնաց: Իր մեկնումէն ետք, ընկերներս զարմանք յայտնեցին իր քաջութեան եւ անվախութեան վրայ, հակառակ իր ստացած բազում սպառնալիքներուն: Իրենց ըսի, որ Հրանդ Տինք զօրաւոր սկզբունքներու եւ հաստատ համոզումի տեր անձ մը ըլլալով, այլ կերպ պիտի չկրնար շարժիլ, որովհետեւ այդ պիտի նշանակէր գործել հակառակ իր մտածելակերպին ու համոզումներուն: Որ նաեւ պիտի նշանակէր, որ պիտի նահանջէր իր կեանքի նպատակէն ու պարպուէր իր բուն էութիւնէն: Մեր այդ հանդիպումէն երկու ամիս չանցած, Յունուար 19, 2007-ին Հրանդ Տինք կը նահատակուէր, յանուն իր մտածելակերպին ու գաղափարներուն:

Իմաստալից ու իմացեալ կեանք մը ապրիլ որոշած մարդը, վսեմ առաքելութեան մը լծուած մարդը, համոզումի տեր քաջ մարդը, մէկ խօսքով՝ առաջնորդ մարդը, չ'անսար առօրեայ հոգերու եւ պարտադրանքներու լուծին, սպառնալիքներու եւ նոյնիսկ մահուան տեսիլքին, որոնք կրնան կաշկանդել իր առաքելութիւնը գլուխ հանելու իր ազատութիւնը: Ընդհակառակը, ամէն տեսակի սպառնալիքները կը հանդիսանան պսակադրումը իր դաւանած հաւատամքի ճշմարտացիութեան: Իր համոզումները, գաղափարները, դաւանանքը, այնքա՛ն վսեմ են, որ սակարկութեան առարկայ չեն կրնար ըլլալ, որպէսզի չվնասուի անոնց արժէքն ու վսեմութիւնը: Պարզ մահկանացուն չի՛ կրնար անմիջապէս մտնել անմահի մտքին մէջ եւ անմահն ալ չի՛ կրնար զիջիլ իր վսեմութիւնէն, ինչ ալ ըլլան պարագաները: Ուրեմն պետք է ապաւինիլ ժամանակի թաւալքին, կարենալ մտնելու համար անմահներու մտքին մէջ ու կարենալ լաւագոյնս հասկնալ զանոնք:

Հրանդ Տինք հերոս առաջնորդ մըն էր, որ մտածողութեան նոր դաշտ մը բացաւ մեր առջեւ: Դժբախտաբար, հերոսներու աշխարհիկ կեանքը ընդհանրապէս կ'ունենայ ողբերգական վերջաւորութիւն: Բայց այդ իրականութիւնը երբեք արգելք չըլլար, որ անոնք մինչեւ վերջ

շարունակեն իրենց գործունեութիւնը, մեկնած իրենց համոզումէն, որ պատրաստ են նուիրաբերել իրենց կեանքը աւելի վեհ եւ արժեքաւոր նպատակի համար: Որովհետեւ անոնք նաեւ կը հաւատան, որ իրենց զոհաբերութիւնը եւ թողած աւանդը պիտի նպաստէ նոր հերոսներու ծնունդին:

Կրկին բեմ բարձրացաւ տուտուկահար Վարդանեան եւ նուազեց հայկական մեղեդիներ:

Դարձեալ Չումի վրայ մեր հետ կապուեցաւ հեղինակ Յովսէփ Յայրենի, որ յայտնեց թէ Յրանդ Տինքի Արդարութեան եւ Ազատութեան տարեկան ճշմանշանը որ Պոլսահայ Միութիւնը կը շնորհէ արժանի գտնուող անձնաւորութեան մը լաւ եւ յարգալիք որոշում մըն է: Ի տարբերութիւն նախկիններուն, սա բառին բուն առումով ձօն կը հանդիսանայ պարզեւատրուողի յիշատակին որովհետեւ ան կեանքէն հեռացած է: Իր կեանքին տարած պայքարին համար եւ երախտագիտութեան դրսեւորում մը յանուն հայ ժողովուրդին, որուն հետ ան ուս-ուսի տուած էր մշտապէս: Վստահ եմ որ իր հոգին ասոր հետ մշտապէս պիտի երջանկանանայ:

Յայրենի կիսեց իր միտքերն ու զգացումները: Ան յայտնեց թէ «Ալի Էրթեմը իր առած յարատեւ քայլերով իրականութիւն դարձուց: Ան՝ քսան տարի եւ ամէն տարի Ապրիլ 24ին այցելութիւն տալով Ծիծեռնակաբերդ՝ յարգանքի տուրք մատուցանելով Յեղասպանութեան զոհերու յիշատակին եւ նուիրատուութիւն ընելով այն թանգարանին, ցայտուն օրինակ մը հանդիսացաւ իր հասարակութեան: Ասիկա ջուր սփռեց նման վերաբերմունք մը տեսնելու ծարաւած սրտերուն: Փաստն էր՝ Լոս Անճելըսէն ստացած նամակը: Անոր գործունեութիւնները չէր սահմանափակուեր Ապրիլ 24ի եւ Յունուար 19ի ոգեկոչումներուն մէջ, այլեւ՝ ան կը պաշտպաներ արդարութեան հրամայականները մինչեւ վերջին աստիճան եւ տեր կը կանգնէր առանց քաշուելու այս ուղղութեամբ տարուող պայքարին: Ալի՝ Յրանդին իրական բարեկամներէն էր: Յրանդ Տինքի անուան շքանշանը իր կենաց օրով շատ պիտի ուրախացներ զինք, կը մաղթենք որ գոնէ իր հոգւոյն ուրախութիւն պատճառէ»:

Ամպիոն մօտեցաւ դարձեալ Տոք. Աւետիքեան եւ ընթերցեց Ալի Էրթեմի կենսագրականը:

Ալի Էրթեմ ծնած է Փետրուար 1, 1950ին, Թուրքիոյ Անգարայի Ծերեֆլի Գոչ Յիսար գաւառի Կեօլլի գիւղը: Մահմետական սիւննի ընտանիքի եօթը զաւակներէն մին ըլլալով: Իր գիւղին մէջ դպրոցի չգոյութեան պատճառով, հայրը նախ զինք ուղարկեց «Գուրանի» դասընթացքներու որպէսզի «գուրան»ը գոց սորվի: Իր պնդումով, իր քրոջ քով դրկուած է դպրոց ուսանելու իր գիւղին առաջին դպրոցականն ըլլալով: Ապա միջնակարգը ուսանած է նախ Անգարա ապա Ծերեֆլի Յիսար: Տասնեւչորս տարեկանէն, միջնակարգէն շրջանաւարտ եղած է: Գացած է Անգարա թէ գործ գտնելու եւ թէ ուսանելու: Ըստ բախտի, Գերմանական գործատեղիի մը գործի ծանուցումը տեսնելով միջնակարգ ավարտած ուսանողներուն համար, անմիջապէս կը դիմէ եւ կ'ընդունուի: Նախ Գերմանիոյ Էսսէն քաղաքը կը յաճախէ իրենց փորձառական դպրոցը, կ'ուսանի որպէս էլեկտրական «թէքնիշըն»: Երեք ու կէս տարի յետոյ կը վկայուի եւ գործի կ'անցնի: Ահա Ալին հոն է որ կը ճանչնայ Թուրքիոյ Պետական ճշումէն փախուստ տուած եւ Գերմանիա ապաստանած թուրք ձախակողմեան յառաջդիմական մտքով յեղափոխականներուն հետ: Ալի կը մասնակցի անոնց ժողովներուն եւ գործնապէս կ'աշխատի անոնց հետ: 1980ական տարիներուն, կազմակերպութեան մէջ կարծիքներու տարբերութիւնները պատճառ կը հանդիսանան բաժանումներու: 1981 թուին, արտերկրի «բարթիզան» կազմակերպութենէն կը հեռանայ եւ կը միանայ նոր կազմակերպութեան մը: Այս խումբին մէջ գտնուող Ալի Էրթեմը 1983ին երկրորդ բաժանման անդամ, փոքր խումբի մը հետ կը շարունակէ իր ճամբան: Այս տարանջատման գործընթացները եւ անոնց մէջ ներառուած կարծիքները բախումներու շատ կարեւոր դեր խաղացին անոր յետագայ որոշումներուն մէջ:



Այդ տարիներուն էր որ Ալի Էրթեմ մասնաւորապէս ծանօթացաւ Յայոց Տեղասպանութեան մասին: Ահա իր ձախակողմեան համոզումները, տասնամեակներու ընթացքին ան կարդաց «մարքսիզմի» հիմնական գործերը եւ այնքան իրեն զարգացուց որ ուրիշներուն սկսաւ պատմել Ռուսաստանի, Չինաստանի, Ալպանիոյ եւ Գուլպայի յեղափոխական պատմութեան մասին: Նոյնպէս ընթանելով շատ ուշ հասկնալ իրենց նորագոյն պատմութիւնը այսինքն Թուրքիոյ մասին: Ան սկսած է հարցնել եւ քննել թէ ի՞նչ պատահած է Յայ, Ասորի եզիտի ազգերուն որոնք մինչեւ վերջերս կ'ապրէին թուրքիոյ մէջ:

Երբ իր միտքը արտայայտել սկսաւ իր խումբի անդամներուն, կեցուածքն ու գաղափարները զարմացուց զիրենք եւ ան որակուեցաւ իբրեւ կեղծ թուրք մանաւանդ երբ ան Տեղասպանութեան ժխտումը դարձուց իր կեանքի նպատակը:

1998ին, շուրջ քսան հոգիի մասնակցութեամբ տեղի ունեցած ժողովով, պաշտօնապէս հիմնեց Տեղասպանութեան Ընդդիմադիրներու Միութիւնը: Ալի Էրթեմ այն կարծիքն ուներ որ այս միութեան անդամները պետք է որ ըլլային յանցագործ հասարակութեան պատկանող անձերէ կազմուած: Այսինքն՝ թուրք, քիւրտ եւ չերքեզ: Այդպէս ալ եղաւ: Այս միութիւնը իր հիմնադրութեան օրէն սկսեալ ստորագահաւաքի սկսած է թուրք ժողովուրդի բոլոր խաւերէն 1915ի Յայոց Տեղասպանութեան ճանաչման համար որ առաջինն էր թուրքիոյ պատմութեան մէջ: Հաւաքուած ստորագրութիւնները ներկայացուած են թուրքիոյ ազգային մեծ ժողովին թուրքիոյ կողմէ այս ստորագրութիւնները չընդունուեցան եւ ետ վերադարձուեցան: Աւելի ուշ, անոնք միջնորդութեամբ ուղարկուեցան Գերմանիոյ խորհրդարան՝ պատուիրակութեամբ Տոքթ. Ժիրայր Քոչարեանի, Տոքթ. Թետ Յոֆմէնի եւ Ալի Էրթեմի կողմէ: 2000ի Յունիսին, տասնըվեց տարիներ ետք, Գերմանիոյ խորհրդարանը ընդունեց Յայոց Տեղասպանութիւնը: 1999 թուականէն սկսեալ, այս միութիւնը ամէն տարի Ապրիլ 24ին պատուիրակութիւն կ'ուղարկէ Յայաստանի յուշահամալիր, ծաղկեպսակ գետեղելու եւ յարգանքի տուրք մատուցանելու Տեղասպանութեան զոհերու յիշատակին: Այս միութիւնը Ապրիլ 24ը կը համարէ «ՍԳՈՅ ՕՐ»:

2002 թուականին, Յունուար 19ն ալ անելցաւ: Հրանդ Տինքի նահատակութիւնը խոր հետք թողուց Տեղասպանութեան Ընդդիմադիրներու Միութեան անդամներուն մօտ, մեծ զայրոյթ յառաջացնելով:

Ալի Էրթեմ ամուսնացած է Սելայ Էրթեմի հետ եւ ունի երկու դուստրեր: Մահացաւ Փետրուար 12, 2021ին:

Յայտագրին վերջին բաժնով Չումի վրայ մեզ հետ կապուեցաւ Ալի Էրթեմի այրին՝ Սելայ Էրթեմը որուն ուղերձը հակիրճ ձեւով թարգմանեց եւ հայերէն լեզուով ընթերցեց հանդիսավարուհի Ռոզա Մատոեանը:

«Պոլսահայ Միութեան յարգելի անդամներ: Յարգանքով եւ կարօտով կ'ողջունեմ բոլորդ Յրանդ Տինքի յիշատակին առջեւ: Երբ լսեցի այն գաղափարը թէ Յրանդ Տինքի իմաստալից պատուոյ նշանը իմ ամուսնոյս պիտի տրուի: Կրնաք երեւակայել թէ ինչպիսի խառն զգացումներ ունեցայ: Որովհետեւ իմ երկրիս մէջ կատարուած Տեղասպանութեան հետեւանքով նման հատիկներու պէս աշխարհի չորս կողմը տարածուած հայութիւնը մեզ արժանի համարած է Յրանդ Տինքի մրցանակը ստանալու: Այս ամէն ինչէն ետք հայերուն թուրքի մը այսպիսի պատիւ մը շնորհելը շատ մեծ առաքինութիւն է: Մեծապէս զգացուած եւ շնորհակալ եմ»:

«Ես հպարտ էի իրմով եւ իր ջանքերով: Ալի գրած էր ի յիշատակ Յրանդին: Յրանդը կ'երազէր դրախտի վերածել մեր ապրած դժոխքը: Ան գիտեր թէ այս երազանքը կ'իրականանայ միայն այն ժամանակ երբ կարենանք լուսաւորել թրքական հասարակութեան պատմութեան մութ էջերը: Ան՝ 1915 թուականին թուրք կառավարիչներու կողմէ իրականացուած Տեղասպանութիւնն էր որ դժոխքի վերածած էին մեր ապրած դրախտը: Ան

դարձաւ Տեղասպանութեան զոհերու ձայնը ովքեր մինչեւ օրս կ'աղաղակեն մարդու իրաւունքներու արդարութեան համար»:

«Ան իր ամբողջ կեանքի ընթացքին քաջալերանքի աղբիւր հանդիսացաւ Թուրքիոյ դէմ տեմոքրատական ուժերու այս գործին համար իր պայքարով եւ իր սկզբունքային դիրքորոշմամբ: Այդ էր որ անհանգստացուց խաւարի պահակներուն: Յրանդ Տինքը ձգեց իր երազանքը որպէս կտակ անոնց որոնք դեռ կ'ապրին մարդկային արժանապատուութիւնը պաշտպանելու գիտակցութեամբ: Թողեց եւ քալեց դէպի մահ, ան ինքզինք զոհեց մարդկութեան փրկելու մեր զոհուած մարդկային արժանապատուութիւնը»:

Հրաւիրուեցաւ Միութեան Գործադիր Յանձնախումբի ատենապետ՝ Տոքթ. Մուրատ Քեօշքեր, Միութեան Նախկին ատենապետ՝ Սիմոն Աճըիլաչ ինչպէս նաեւ Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեան յանձնելու համար «Հրանդ Տինք Արդարութեան եւ Ազատութեան» տարեկան ճքանշանը, հանգուցեալ Ալի Էրթեմի (յետ մահու):

Ձեռնարկի աւարտին տեղի ունեցաւ խմբային լուսանկարչական պահ, ապա պատշաճ հիւրասիրութիւն, որուն ընթացքին ներկաները իրար հետ ունեցան մտերմիկ զրոյցի պահեր:





## ՄՏԵՐՄԻԿ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ՈՒ ԶՐՈՅՑ ՊՈԼՍԱՅԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԷՋ



Մեծ հաճոյքն ունեցանք վայելելու Պոլսաբնակ շնորհալի հայուհի Գարուլին Սարըպոյաճեան Մամիկոնեանի ներկայութիւնը Պոլսահայ Միութեան երդիքին Տակ Յինգզաբթի, Փետրուար 9, 2023ին Լոս Անճելըս այցելութեան առիթով:

Գարուլին զանազան տեղեկութիւններ տուաւ Պոլսոյ հայ համայնքի արուեստական, գրական, կրթական ու համայնքը հետաքրքրող այլ նիւթերու շուրջ: Ան մանրամասնօրէն ծանրացաւ Պոլսոյ մէջ Նոյեմբեր 2020-էն ի վեր ներկայացուող «Կոմիտաս» թատերախաղի ներկայացումներու եւ արձանագրած յաջողութեանց մասին: Թատերախաղը կը ցուցնէր Կոմիտասի կեանքը իր ծննդավայր Կուտինայէն (Քիւթահիա) մինչեւ Փարիզ:

Բոլորովին ոչ-հայկական արտադրութիւն մը մեր մեծ հանճարի մասին որու անունն ու գործը դարձած է ազգի ինքնագիտակցութեան և ինքնութեան պարտադիր բաղադրիչ: Գրի առնուած եւ բեմադրուած Ահմետ Սամի Էօզպուտաքի եւ Կոմիտասի դերը ստանձնած՝ Ֆեմի Գարասսլան «Եղճու» թատերախումբէն: Խաղը լոյս կը սփռէ այն պատմական իրականութիւններուն որոնք տասնամեակներ արգիլուած են նիւթ հանդիսանալ այդ Նոյն հողերուն վրայ:

Ներկայացման երաժշտական բաժինը ստանձնած է Գարուլինի կողակից Պր. Յակոբ Մամիկոնեան, որ խմբավար է Պոլսոյ 90ամեայ «Լուսաւորիչ» երգչախումբին: «Լուսաւորիչ»



երգչախումբը կազմուած է 30 հայ երիտասարդ-երիտասարդուհիներէ: Երգչախումբը մեծ յաջողութիւն արձանագրած շնորհիւ Պր. Յակոբ Մամիկոնեանի տարած տքնաջան ու նուիրուած աշխատանքերուն: Երգչախումբը խաղարկութեան տելուողութեան ընթացքին կիսաթափանց սել վարագոյրի մը ետին, դերակատարին համընթաց, կը ներկայացէ մեծագոյն հանճարի ստեղծագործութիւնները մաս առ մաս:

Ներկայացուցները տեղի կ'ունենան ու պիտի շարունակեն ունենալ Գումգաբուի Որդւոց Որոտման եկեղեցւոյ սրահը որը աւելի իւրայատուկ ու հետաքրքրական կը դարձնէ բեմադրութիւնը: Թրքերէնով եւ ֆրանսերէնով ներկայացուած խաղարկութիւնը անսպասելի ու լայն ընդունելութիւն գտած է ոչ թէ միայն Պոլսոյ հայ համայնքի այլ թուրք եւ այլ ազգերու կողմէ ու արժանի հանդիսացած բազում մրցանակներու, գովասանքներու:

Սոյն բեմադրութիւնը ներկայացուած է նաեւ Հայաստանի մէջ նոյնպէս գնահատանքի արժանանալով տեղւոյն բարձր արուեստի ճաշակի տէր հետեւաբար դժուարահաճ արուեստագետներու կողմէ:

Ազնուափայլ հայուհին, Գարուիկը, կը շարունակէ իր ուսուցչական ասպարեզը գտնելով հոգեկան բաւարարութիւն, ներշնչելով հայոց հոգին ապագայ սերունդներուն:

Գարուիկն կը խոստովանի թէ Կեդրոնականի այժմեայ տնօրէնուհի՝ Տիկին Սիլվա Գուլյումճեան մեծ դեր ունեցած է իր մէջ բուռն համակրանք յառաջացնելու՝ հայկական լեզուի ու գրականութեան հանդէպ: Այսուհետեւ հետեւելով իր իղձերուն, հայ գրականութեան յատուկ դասընթացքներ ստացած է Պր. Հատտեճեանէ եւ բանաստեղծ Չահրատէ:

Համեստ ու երեւելի հայուհին նաեւ անդրադարձաւ Թուրքիոյ եւ արտասահմանի տարածքին Պոլսահայ երիտասարդներու արձանագրած բարձր յաջողութիւններու մասին, ըլլայ գրականութեան, ըլլայ արուեստի եւ երաժշտութեան ճիւղերու մէջ:

Գարուիկի խոսքերը կը բխէին իր սրտի խորքերէն այնքան որ զգացումները կը փոխանցուէր մեզ ապրեցնելով յուզմունքի, ուրախութեան, պարծանքի ու զայրոյթի խառն զգացական պահեր: Ան թարմացնելով մեզ կը հաղորդէր առօրեայ եղելութիւնները, նաեւ իրենց կարողութիւններէն վեր զարգացող անցուդարձերով յառաջ եկած խնդիրները, իրազէկ ըլլալով տեղի ունեցող իրադարձութիւններուն զգացուած՝ բայց ոչ միամիտ:

Ուսուցչական ասպարեզին առընչութեամբ ան նաեւ կը շարունակէ թատերական ու պարի աշխատանքներ վարել: Վերջին մի քանի տարիներու ընթացքին ալ սկսած է հանդիսավարել «Դիմանկարներ» անուան տակ յայտագիր մը որը կը սփռուի «Լոյս» հեռատեսիլի կայանէն ուր հայկական մշակոյթն ու արուեստը քարոզող ծրագիրով կը հիւրընկալէ հայ համայնքի արժէքները: Սոյն հաղորդաշարի երկրորդ բաժնի հատուածները պիտի սկսին Մարտ ամսուան մէջ:

Ինչ իմաստ կ'ունենային գիտելիքները, մշակոյթը եթէ անոնք չփոխանցուէին յաջորդ սերունդին: Առնուած ամէն մի քայլ կարելոր է ազգի մը գոյատեւման առնչութեամբ: Սերմանել հունտերը երիտասարդ սերունդին որպէսզի ծաղկին ու ծլանան ապագային: Այնպէս որ ողջոյն բոլոր անոնց որոնք աշխատանքներ կը տանին սոյն ուղղութեամբ:

Ձեր ալ վարձքը կատար սիրելի Գարուին որ դուն ու կողակիցդ ձեռք ձեռքի տալով, ձեր կարգին այս պաշտօնը կատարելու պայքարը կուտաք :

Չարուհի Գ. Խաչիկեան

Լոս Անճելոս, Փետրուար 2023

---

## **ԳԱՐՈՒԻՆ ՍԱՐԸՊՈՅԱՃԵԱՆ- ՄԱՄԻԿՈՆԵԱՆ**

Ծնած է 1972 թուականին Պոլիս:

Աւարտելով Էսսեան Վարժարանը, ան երրորդ տեղով աւարտած է Մարմարայի համալսարանի կրթութեան Զիմնարկի մարմնամարզանքի բաժինը:

25 տարի դասաւանդած է Կեդրոնականի և Թարգմանչաց Վարժարաններու մէջ:

Զիմնած է «Երագ» ժամանակակից պարի համոյթը և 1995- 2000 թուականներուն բեմադրած բազմաթիւ ներկայացումներ՝ որպէս պարուսոյց և գլխաւոր գեղարուեստական ղեկավար: Իր անսամպլի հետ հրաւիրուած է փառատօներու ու հեռուստացոյցերու:

Ան բանաստեղծ Չահրատէն և «Մարմարա» թերթի գլխաւոր խմբագիր, գրող Ռոպեր Զատ տեճեանէն դասեր առած է հայ գրականութեան մասին:

Ան ելոյթներ ունեցած է Կեդրոնականի կողմէ կազմակերպուած բազմաթիւ գրական երեկոներու ժամանակ: Ան կատարեց Չահրատի յիշատակին կազմակերպուած գրական երեկոյի շնորհանդէսը: Ան ներկայացուցած է Զրանդ Տիկի օրաթօրիայի շնորհանդէսները Զայաստանի մէջ կայացած համաշխարհային բրեմիերային և Պոլսոյ համերգին:

Սասունցներու պար կոչուող ներկայացման համար ան յատուկ հրաւեր ստացած է Զայաստանէն և շնորհանդէս ըրած է երևանեան և Պոլսական ցուցադրութիւններուն:

Ամուսնոյն՝ Յակոբ Մամիկոնեանի, մենակատար Պարթեւ Կարեանի հետ եղած է Պոլսոյ հայկական առաջին սիմֆոնիք Եսթրատային համերգաշարի՝ Desilk համերգներու հիմնադիրներէն:

Մասնակցած է Փոքրիկ հայկական հեքիաթի կայքի թիմին և մասնակցած է հայոց դպրոցներուն մէջ հայոց լեզուի տարածման ու զարգացման ջանքերուն՝ և՛ որպէս Բրաքթիք, և՛ որպէս պատմող:

Կոմիտաս Վարդապետի յիշատակին կազմակերպուած «Ինչու»- ի նախաձեռնութեամբ պարած է ժամանակակից պարերի ներկայացումին:

Ան պարած է որպէս գլխաւոր դերերէն մեկը բազմաթիւ ներկայացումներուն Լևոն Թաբերեանի անուան ժամանակակից պարի համոյթի հետ, որուն միացած է 1995 թուականին: Վերջին անգամ ան բեմ բարձրացած է «Անուշ» (2013) և «Եղճու» (2019) թատերախումբի գլխաւոր հերոսներէն մեկը:

Պոլսոյ մէջ Հայաստանի մշտական ներկայացուցչութեան տարեդարձի կապակցութեամբ Լիւթֆի Քըրդար Քոնկրետին մէջ տեղի ունեցած արձանագրային գիշերը ան նաև՝ մասնակցած է կազմկոմիտէին, և՛ Աթթիի հետ ներկայացուցած է գիշերը: Հանդես եկած է Սարո Պենկլեանի հետ:

«Լոյս» հեռուստաընկերութեամբ՝ հայերէն և թրքերէն հեռարձակուող առաջին հայկական հեռուստատեսութեամբ, ան ամեն շաբաթ կը պատրաստէ և կը ներկայացնէ հայկական մշակոյթն ու արուեստը քարոզող հաղորդումներ՝ «Դիմանկարներ» հաղորդաշարով, որ կը հեռարձակուի ամբողջ Թուրքիոյ, մշակութային և արուեստի ծրագրով, որ կը հիւրընկալէ է հայ համայնքի արժէքներուն:



### **ՄԻՋԻՆՔ**

**Մեծ Պահոց ճիշդ կեսը յատկանշող օրը կը կոչուի ՄԻՋԻՆՔ: Կը նշուի Մեծ Պահքի 24-րդ օրը, այսինքն Դ. շաբթուան Չորեքշաբթի օրը: Միջինքը, զգաստութեան ու ժուժկալ կեանք թելադրող կրօնական ամենաերկար պահեցողութեան՝ Մեծ Պահքին, կես ժամանակաշրջանը նուաճած ըլլալու աւետումն է, որ իբր այդ կը նկատուի նաեւ "Խնդութեան առիթ":**

**Նշենք թէ՛ յատուկ նշանակութեամբ կրօնական տօն մը չէ, առաւելաբար ժողովրդական համախմբումի մը առիթ է, կորով եւ բարոյական քաջալերանք ներշնչելու հաւատացեալներուն, որպէսզի անոնք "իմաստալից պահեցողութիւնը"՝ նոյն ոգիով շարունակեն երկրորդ կիսուն եւս, մինչեւ պահքի լրումը՝ կամ Ս. Չատիկը: Աւելցնենք նաեւ՝ որ Միջինքը նշելու կրօնական յատուկ արարողութիւններ չկան. համապատասխան Չորեքշաբթեան արարողութիւնները նոյնն են. Արեւագալի ժամերգութիւնը եւ հրաժարման ու խոստովանանքի արարողութիւնները... միակ յատկանշականը այն է որ աւելի հանդիսաւորութեամբ ու ճոխ խումբերով կը կատարուին երգեցողութիւնները:**


**Միջինքի օրուան համար հայերս ունինք յատուկ աւանդութիւններ. Յետ եկեղեցական արարողութեանց կը կազմակերպուին հաւաքոյթներ, մեծ պահոց յատուկ ուտելիքներով հայկական սեղանները, վկայութիւններ են հայ կնոջ կողմէ ցուցաբերուած նախանձախնդրութեան եւ յարատեւող կամքին: Տուներու մէջ կը պատրաստուին Միջինքի բաղարջ հաց, կարկանդակ եւ "կոլտապ":**

**Հացին մէջ ընդհանրապէս կը պահուի մանր երկաթեայ դրամ մը. հաւաքոյթին ընթացքին երբ հացը մաս առ մաս կը բաժնուի, բոլորին**

ուշադրութիւնը կը սրուի գտնելու տարուան բախտաւորը, այս պարագային այն՝ որուն բաղարջահացի մասէն դուրս պիտի գայ պահուած դրամը...կամ գունաւոր ուլունք մը ..  
 Ի դէպ, Կուտապը պահեցողութեան տեսակ մը հացեղեմ է, որուն խմորը կը պատրաստուի ձեթով... ներփակեալ խաշած լուբիա, բակլայ կամ այլ բանջարեղէններ:

Ընտանեկան պայմաններու մէջ, սովորութիւն եղած է, որ նշանուած տղաք կամ տղուն ընտանեկան պարագաները նուէրներ դրկեն հարսնցուին.. այսպէսով կ'օգնեն ամբողջացնելու հարսին օժիտը: Հայրենի գիւղերու մէջ, սովորութիւն եղած է որ տարին անգամ մը Միջինքին, աղջիկներ եւ նորահարսեր ազատ ազատ ձգուին, անոնք եփած կուտապը առած ընկերուհիներուն հետ բացատ մը հաճելի ժամանակ կ'անցնեն զրոյցներով, երգերով ու պարերով, հեռու տարիքոտ կիներու կամ կեսուրներու հսկողութենէն... առիթ է նաեւ իրարու գաղտնիքներ փոխանակելու ու խրատներ կամ յուսալից խօսքեր ստանալու....

## ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ



8 մարտ 1857-ին Նիւ Եորքի մէջ հագուստեղէնի եւ հիւսուածեղէնի գործարաններու կին աշխատաւորներ, յատկապէս Նիւ Եորքի մէջ, բողոքի ցոյց կը կազմակերպեն: Շուրջ 15.000 կիներ կը բողոքեն աշխատանքի պայմաններուն դէմ: Անոնք կը պահանջեն նուազեցնել աշխատանքի ժամերն ու տղամարդոց հետ հաւասարաչափ ամսական ստանալ, ինչպէս նաեւ՝ քուէարկելու իրաւունք ստանալ: Աշխատանքի պայմաններու եւ աշխատավարձերու բարելաւման պահանջներով ու կիներուն իրաւահաւասարութեան առաջադրանքով յեղաշրջման ալիք մը թափ կ'առնէ ու կը տարածուի երկու ցամաքամասերուն մէջ՝ Եւրոպա եւ Ամերիկա:

28 Փետրուար 1909-ին, Ամերիկայի Ընկերվարական կուսակցութեան կողմէ առաջին անգամ ըլլալով «Կիներու Ազգային Օր» կը յայտարարուի: Առաջարկը կը ներկայացնէ Թերեզա Մալքիչէէն: Այնուհետեւ մինչեւ 1913 կը նշուի Փետրուար ամսուն վերջին Կիրակին





**MR. ANTRANIK OZBAG  
ZORAYAN**

*October 1, 1932 (Zara, Sivas, Turkey) –  
February 5, 2023 (Newport Beach, CA)*



On behalf of the  
Organization of Istanbul Armenians,  
we express our deepest condolences  
to the family of the deceased.  
The following donations were made in  
his memory.

**OIA, GENERAL FUND**

	Diane Jean	
Ms.	Barsam	1,000.00
Mr.& Mrs.	Herman Karabulut	100.00
Mr.& Mrs.	Nazar O. Sarafian	100.00
Mr.& Mrs.	Puzant Cinar	150.00
Mr.& Mrs.	Pierre Cinar	150.00
Mr.& Mrs.	Yervant Cinar	100.00
Mr.& Mrs.	Rinku Salni	100.00
Mr.	Aret Elmas	50.00
Mr.	Kirkor Cancik	100.00
Mrs.	Ardemis Ceyhan	100.00
Ms.	Mireille Terzian	100.00
Mr.	Robert Ekizian	100.00
Mr.& Mrs.	Edi Sarafoglu	500.00

**2,650.00**



**MRS. AZADUHI NAZLIYAN**  
*(Istanbul-Turkey 1936 –  
Los Angeles USA 2023)*



On behalf of the  
Organization of Istanbul Armenians,  
we express our deepest condolences  
to the family of the deceased.  
The following donations were made in  
her memory.

**OIA, GENERAL FUND**

Mrs.	Vartuhi Dimitian	300.00
	Aliksan	
Mr.& Mrs.	Zarmanoglu	250.00
Mr.& Mrs.	Armen Asik	200.00
Mr.& Mrs.	Berc Culhaoglu	200.00
Mr.& Mrs.	Chris Madilian	200.00
	Herman	
Mr.& Mrs.	Culhaoglu	200.00
Mr.& Mrs.	Kirkor Culhaoglu	100.00
Mrs.	Mari Agazaryan	100.00

**1,550.00**

**In memory of late VAHE KAZAR**  
**(continued from previous issue)**

**OIA GENERAL FUND**

<b>Mr. &amp; Mrs. Manuk Cirkinian</b>	<b>100</b>
<b>Ms. Nadia Barsamian</b>	<b>100</b>

Յարգելի անդամ/բարեկամ  
Եթե կը փափաքիք տեղեակ մնալ Պոլսահայ Միութեան  
ձեռնարկներէն եւ գործունէութիւններէն,  
հաճեցէք այցելել Միութեան կայքէջը

[www.oia.net](http://www.oia.net)



Dear OIA member/friend

If you would like to stay informed of OIA events and activities please  
visit OIA website

[www.oia.net](http://www.oia.net)

### ՅԱՌԱՋԻԿԱՅ ԶԵՌՆԱՐԿ

• Ընտանեկան գիշեր,  
«ԳԱՐՆԱՆ ԱՌԱՋԻՆ ՕՐՈՒԱՆ  
ԵՒ ԶԱՏԿՈՒԱՆ  
ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ»

Զինգշաբթի, Մարտ 23, 2023  
Երեկոյեան ժամը 7:30  
Միութեան Կեդրոնը:

### UPCOMING EVENT

• Family night (1ST DAY OF  
SPRING AND EASTER  
CELEBRATION) on Thursday,  
March 23rd, 2023 at OIA center

### ԱՌԱՋՆԵՐ ԵՒ ԱՍԱՑՈՒՄՇՔՆԵՐ

- Դուն քո՛ւն, բախտոյ արթո՛ւն:
- Դրացիիդ ցանկայ հաւ մը, որ Աստուած տայ քեզի կով մը:
- Եթէ երիտասարդութիւնը կամենար եւ ծերութիւնը կարենար:
- Եթէ կռակ ունիս, բեռ բեռցնող շատ կ'ըլլայ:
- Երբ սիրածդ չի գտնես, սիրո՛ւ գտածդ:
- Երդումը ստախօսին վկան է:
- Զաւակը չի ծեծողը ծունկը կը ծեծէ:
- Էշն ի՛նչ գիտէ նուշը, կ'երթայ կ'ուտէ փուշը:
- Ընկերոջ հինը լաւ է, հագուաստին նորը:

